Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սերտիֆիկացման նշանակությունն ու դերն արտադրանքի որակի և մարդու իրավունքների պաշտպանության գործում, բ. ճիշտ է ներկայացնում սերտիֆիկացման օբյեկտները և գործունեության ոլորտները՝ արտադրանք, ծառայություն, գործընթաց, արտադրության և կազամակերպման որակի համակարգ, անձնակազմի որակավորում, գ. ճիշտ է ներկայացնում սերտիֆիկատը և համապատասխանության նշանը, դ. ճիշտ է ներկայացնում ծառայությունների սերտիֆիկացումը և դրա առանձնահատկությունները, ե. ճիշտ է ներկայացնում ստանդարտացման և սերտիֆիկացման պետական հսկողության համակարգը, զ. ճիշտ է ներկայացնում ստանդարտների և սերտիֆիկատների մշակման և դրանց հաստատման կարգը:

Միջին մասնագիտական կրթության 2902 «Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում» մասնագիտության հիմնական կրթական ծրագրի հատուկ մասնագիտական և հատուկ մասնագիտական կարողությունների մոդուլներ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-014
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ պարզ ճարտարապետական գծագրեր կատարելու, մասնագիտական գործունեությունում հիմնական քաղաքաշինական պահանջների պահպանումն ապահովելու համար:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-001 «Ճարտարագիտական գրաֆիկա: Պրոյեկցիաներ և հատույթներ» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել ճարտարապետության հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ճարտարապետության էությունը և դրա խնդիրները, բ. ճիշտ է ներկայացնում ճարտարապետական նախագծման ընթացքը, գ. ճիշտ է մեկնաբանում շենքերի և կառույցների վերաբերյալ հիմնական տեղեկությունները, դ. ճիշտ է մեկնաբանում ազգային ճարտարապետության առանձնահատկությունները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել ճարտարապետական նախագծման հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ճարտարապետական նախագծումը, բ. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների արտաքին բեռնվածքներն ու ազդեցությունները, գ. ճիշտ է ներկայացնում է չափերի մոդուլային կոորդինացման համակարգը, դ. ճիշտ է կատարում հիմքերի նախագծումը, ե. ճիշտ է կատարում հատակագծերի նախագծումը, զ. ճիշտ է կատարում կտրվածքների նախագծումը,

	է. ճիշտ է կատարում ճակատների նախագծումը, ը. ճիշտ է կատարում տանիքի նախագծումը, թ. ճիշտ է կատարում առանձին հանգույցների նախագծումը, ժ. ճիշտ է կազմում ճարտարապետական մասնագրերը, ի. ճիշտ է տարբերակում արդյունաբերական, բնակելի և հասարակական շենքերի ու կառույցների նախագծման առանձնահատկությունները:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել քաղաքաշինության հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում քաղաքաշինության հիմնական խնդիրները, բ. ճիշտ է ներկայացնում գործող քաղաքաշինական նորմերի հիմնական պահանջներին, գ. ճիշտ է ներկայացնում ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումների էությունը, դ. ճիշտ է ներկայացնում բարդ երկրաֆիզիկական պայմաններում ճարտարապետական նախագծման առանձնահատկությունները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆԵՐ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-015
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել շինարարական կոնստրուկցիաների, դրանց տեսակների, դասակարգման, կիրառման շրջանակների և կայունության հայտանիշների մասին ընդհանուր իմացություն, որը կօժանդակի մասնագիտության բերումով տարբեր աշխատանքային խնդիրներ լուծելուն անհրաժեշտ կարողությունների ձեռքբերմանը:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-001 «Ճարտարագիտական գրաֆիկա: Պրոյեկցիաներ և հատույթներ» և ՇԿՇ 5-11-004 «Շինարարական նյութեր և իրեր» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Շինարարական կոնստրուկցիաների մասին ընդհանուր իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շինարարական կոնստրուկցիաների դերն ու նշանակությունը,

	բ. ճիշտ է պատկերացնում շինարարական կոնստրուկցիաների կրող և պատող խմբերն ու դրանց նշանակությունը, գ. ճիշտ է թվարկում շինարարական կրող կոնստրուկցիաները՝ ներկայացնելով դրանց կիրառության շրջանակը, դ. ճիշտ է թվարկում շինարարական պատող կոնստրուկցիաները՝ ներկայացնելով դրանց կիրառության շրջանակը, ե. ճիշտ է ներկայացնում շինարարական կոնստրուկցիաների դասակարգման հայտանիշները՝ բեռնվածքի բնույթ, ծռման բնույթ, ձգման բնույթ, հաշվարկային սխեմա, պատրաստման համար օգտագործվող հիմնական շինանյութի տեսակ և այլն:
ՈՒսումնառության արդյունք 2	Շինարարական կոնստրուկցիաների՝ ըստ հաշվարկային սխեմայի դասակարգման իմացություն և բնութագրում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում շինարարական կոնստրուկցիաների «հաշվարկային սխեմա» հասկացությունը, բ. ճիշտ է ներկայացնում շինարարական կոնստրուկցիաների՝ ըստ հաշվարկային սխեմայի դասակարգման խմբերը, գ. ճիշտ է ներկայացնում գծային շինարարական կոնստրուկցիաները և դրանց դերն ու նշանակությունը, դ. ճիշտ է ներկայացնում տարածական շինարարական կոնստրուկցիաները և դրանց դերն ու նշանակությունը, ե. ճիշտ է ներկայացնում հարթ շինարարական կոնստրուկցիաները և դրանց դերն ու նշանակությունը, զ. ճիշտ է նկարագրում շինարարական կոնստրուկցիաների գծային (հեծան. սյուն և այլն), հարթակային (սալ, պանել, ֆերմա, վրաքաշ և այլն) ու տարածական)թաղանթ, գմբեթ, թաղ և այլն) խմբերը:
ՈՒսումնառության արդյունք 3	Շինարարական կոնստրուկցիաների՝ ըստ պատրաստման համար օգտագործվող հիմնական շինանյութի տեսակի դասակարգման իմացություն և բնութագրում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է թվարկում շինարարական կոնստրուկցիաների պատրաստման համար օգտագործվող հիմնական շինանյութերի տեսակները, բ. ճիշտ է ներկայացնում բետոնե շինարարական կոնստրուկցիաներն ու շինվածքները և դրանց նշանակությունը, գ. ճիշտ է ներկայացնում երկաթբետոնե շինարարական կոնստրուկցիաներն ու շինվածքները և դրանց նշանակությունը, դ. ճիշտ է ներկայացնում պողպատե շինարարական կոնստրուկցիաները և դրանց նշանակությունը, ե. ճիշտ է ներկայացնում քարե շինարարական կոնստրուկցիաները և դրանց նշանակությունը, զ. ճիշտ է ներկայացնում փոյտե շինարարական կոնստրուկցիաները և դրանց նշանակությունը, է. ճիշտ է ներկայացնում պլաստմասսայե շինարարական կոնստրուկցիաները և դրանց նշանակությունը, ը.ճիշտ է ներկայացնում ասբեստացեմենտային շինարարական կոնստրուկցիաներն ու շինվածքները և դրանց

	նշանակությունը, թ. ճիշտ է ներկայացնում պնևմատիկ շինարարական կոնստրուկցիաները և դրանց նշանակությունը:
ՈՒսումնառության արդյունք 4	Բետոնե ու երկաթբետոնե շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների կիրառման ու դասակարգման իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բետոնե շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների արտադրությունն ու դրանում օգտագործվող բետոնի հիմնական տեսակները, բ. ճիշտ է համեմատում սեցմող և ձգող ճիգեր կիրառող բետոնե շինարարական կոնստրուկցիաներն ու շինվածքները, գ. ճիշտ է դասակարգում երկաթբետոնե շինարարական կոնստրուկցիաները և շինվածքներն՝ ըստ կատարման եղանակի, ներկայացնում է դրանց համեմատական բնութագրերը (միաձույլ, հավաքովի, հավաքովի-միաձույլ), դ. ճիշտ է դասակարգում երկաթբետոնե շինարարական կոնստրուկցիաները և շինվածքներն՝ ըստ դրանց արտադրությունում կիրառվող բետոնի տեսակի (ծանր, թեթև, բջջավոր, կրակակայուն), ե. ճիշտ է դասակարգում երկաթբետոնե շինարարական կոնստրուկցիաները և շինվածքներն՝ ըստ լարված վիճակի, ներկայացնում է դրանց համեմատական բնութագրերը (սովորական, նախալարված), զ. ճիշտ է բացատրում երկաթբետոնե շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների ամրանավորման եղանակները (հյուսված ցանց, զոդված ցանց, կարկասապատում), է. ճիշտ է մեկնաբանում երկաթբետոնե շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների կոռոզիայի ենթարկվելու վտանգավորությունն ու բարձր ջերմաստիճանում ամրության նվազման հետևանքները:
ՈՒսումնառության արդյունք 5	Շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների կայունության հայտանիշների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է բնութագրում շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների կայունության բովանդակությունը, բ. ճիշտ է ներկայացնում շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների կայունության չափագրման մեթոդները, գ. ճիշտ է մեկնաբանում շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների սառնակայունությունն ու ջերմակայունությունը, դ. ճիշտ է մեկնաբանում շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների կրակահեստությունն ու հրահեստությունը, ե. ճիշտ է բնութագրում շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների ջրակայունությունը, զ. ճիշտ է բնութագրում շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների թթվակայունությունն ու ալկալիակայունությունը, է. ճիշտ է բնութագրում շինարարական կոնստրուկցիաների և շինվածքների սեյսմակայունությունը:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-016
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ շինարարամոնտաժային աշխատանքների նախապատրաստումն ու իրականացումն ապահովելու համար:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-004 «Շինարարական նյութեր և իրեր», ՇԿՇ 5-11-014 «Շենքերի և կառույցների ճարտարապետություն» և ՇԿՇ 5-11-015 «Շինարարական կոնստրուկցիաներ» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել շինարարական գործընթացների տեխնոլոգիական նախագծման նպատակը և բովանդակությունը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շինարարական գործընթացների տեխնոլոգիական նախագծման նպատակը, տարբերում է տեխնոլոգիական քարտերը և սխեմաները, բ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական քարտի կազմը, գ. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական քարտի առանձին բաժինների հակիրճ նկարագիրը:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել շինարարական հրապարակի ճարտարագիտական նախապատրաստման միջոցառումների համակարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում երկրաբաշխական (գեոդեզիական) նշահարման հիմքի ստեղծման գործողությունների հաջորդականությունը, տեղանքում նշանների պատրաստման և տեղադրման եղանակները, գլխավոր առանցքների ամրացման սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում տարածքի մաքրման, գոյություն ունեցող շինությունների քանդման եղանակները և հաջորդականությունը, գ. ճիշտ է ներկայացնում շինարարական հրապարակի մակերևույթային և գրունտային ջրերի հեռացման եղանակները:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել շինարարամոնտաժային գործընթացների իրականացման տեխնոլոգիան
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բնահողերի շինարարական հատկությունները, մշակման եղանակները,

	բ. ճիշտ է ներկայացնում գոյություն ունեցող կաղապարամածային համակարգերի տեսակները և դրանց տեղադրման և ամրացման տեխնոլոգիական հմտությունները, գ. ճիշտ է ներկայացնում ամրանների դասակարգումը, ամրանային կառուցվածքների պատրաստման և տեղադրման տեխնոլոգիական հմտությունները, դ. ճիշտ է ներկայացնում բետոնախառնուրդների տեսակները և համապատասխան կազմը, պատրաստման եղանակները բնականոն և ծայրահեղ կլիմայական պայմաններում , հավելումների նշանակությունը , ե. ճիշտ է ներկայացնում քարային շարվածքների տարրերը, տեսակները, և դրանց իրականացման տեխնոլոգիական հմտությունները, զ. ճիշտ է ներկայացնում շինարարական կոնստրուկցիաների մոնտաժման տեխնոլոգիաները, մոնտաժման տեխնիկական միջոցները, մոնտաժային միացումների, կցվանքների իրականացման տեխնոլոգիական հմտությունները, ծայրահեղ կլիմայական պայմաններում մոնտաժային աշխատանքների իրականացման առանձնահատկությունները, է. ճիշտ է ներկայացնում փայտե և պլաստմասե կոնստրուկցիաների պատրաստման և մոնտաժման եղանակները. ը. ճիշտ է ներկայացնում պաշտպանիչ ծածկույթների իրականացման ավանդական և նորագույն տեխնոլոգիաները, ձմեռային պայմաններում դրանց իրականացման տեխնոլոգիական առանձնահատկությունները, թ. ճիշտ է ներկայացնում վերջնական պատվածքների իրականացման ավանդական և նորագույն տեխնոլոգիաները, ծայրահեղ կլիմայական պայմաններում դրանց իրականացման առանձնահատկությունները:
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել միաձույլ և հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներով շենքերի կառուցման տեխնոլոգիաները
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում միաձույլ երկաթբետոնից շենքերի կառուցման տեխնոլոգիան, մեկնաբանում է դրա առավելություններն ու թերությունները, բ.ճիշտ է ներկայացնում միաձույլ կմախքով շենքերի կառուցման տեխնոլոգիան, մեկնաբանում է դրա առավելություններն ու թերությունները, դ.ճիշտ է ներկայացնում ժամանակակից միաձույլ շինարարությունում կիրառվող կաղապարամածային համակարգերը ե.ճիշտ է ներկայացնում պանելային շենքերի կառուցման տեխնոլոգիան, զ.ճիշտ է ներկայացնում կարկասապանելային շենքերի կառուցման տեխնոլոգիան,

	է.ճիշտ է ներկայացնում խոշորաբլոկային շենքերի կառուցման տեխնոլոգիան, ը.ճիշտ է ներկայացնում ծավալաբլոկային շենքերի կառուցման տեխնոլոգիան, թ.ճիշտ է մեկնաբանում հավաքովի երկաթբետոնե կոնստրուկցիաներով շենքերի կառուցման տեխնոլոգիաների առավելություններն ու թերությունները:
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել արդյունաբերական շենքերի կառուցման տեխնոլոգիաները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում միահարկ արդյունաբերական շենքերի կառուցման տեխնոլոգիաները, բ. ճիշտ է ներկայացնում բազմահարկ արդյունաբերական շենքերի կառուցման տեխնոլոգիաները, գ. ճիշտ է ներկայացնում երկաթբետոնե և մետաղական կմախքով արդյունաբերական շենքերի կառուցման տեխնոլոգիական առանձնահատկությունները:
ՈՒսումնառության արդյունք 6	Ներկայացնել ոչ ավանդական և եզակի շենքերի և կառույցների կառուցման տեխնոլոգիաները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մեծաթռիչք շենքերի և կառույցների կառուցման տեխնոլոգիաները՝թաղանթային, գմբեթային, «կախված» և այլ ծածկերով, բ. ճիշտ է ներկայացնում կոնստրուկցիաների բարձրացման եղանակով կառուցվող շենքերի և կառույցների կառուցման տեխնոլոգիաները՝հարկերի բարձրացման, ծածկերի բարձրացման, աշտարակային տիպի և այլն, գ. ճիշտ է ներկայացնում հիդրոտեխնիկական, տրանսպորտային օբյեկտների կառուցման տեխնոլոգիական առանձնահատկությունները, դ. ճիշտ է ներկայացնում ռեզերվուարների կառուցման տեխնոլոգիաները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-017
Մոդուլի նպատակը	Մոդուլի նպատակն է՝ ուսանողի մոտ ձևավորել լիարժեք պատկերացումներ շինարարության նախապատրաստման, աշխատանքների կատարման ընդհանուր կարգի, տևողության ու հաջորդականության սահմանման և ապահովման, բոլոր տեսակի ռեսուրսներով մատակարարման փոխկապակցված համակարգի վերաբերյալ: Ավարտելով այս մոդուլը՝ ուսանողը ձեռք կբերի կարողություններ և հմտություններ շինարարության ստորին և միջին օղակներում շինարարամոնտաժային աշխատանքների կազմակերպումն ապահովելու համար:

Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-014 «Շենքերի և կառույցների ճարտարապետություն», ՇԿՇ 5-11-015 «Շինարարական կոնստրուկցիաներ» և ՇԿՇ 5-11-016 «Շինարարական արտադրության տեխնոլոգիա » մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել շինարարական արտադրության նախապատրաստման միասնական համակարգի տարրերը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շինարության ընդհանուր կազմակերպչատեխնիկական նախապատրաստման միջոցառումները, բ. ճիշտ է ներկայացնում օբյեկտի շինարարության նախապատրաստման միջոցառումները, գ. ճիշտ է ներկայացնում շինարարական աշխատանքների նախապատրաստման միջոցառումները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել շինարարության նախագծման և հետազննությունների կազմակերպման հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում նախագծման խնդիրները և կազմակերպումը, բ. ճիշտ է տարբերակում նախագծման փուլերը և նախագծային փաստաթղթերի բովանդակությունը, գ. ճիշտ է սահմանում նախագիծը՝ ներկայացնելով նախագծի հիմնական բաժինների կազմը և դրանց համառոտ բովանդակությունը, դ. ճիշտ է ներկայացնում նախագծանախահաշվային փաստաթղթերի համաձայնեցման, փորձաքննության և հաստատման գործընթացը, ե. ճիշտ է ներկայացնում Շինարարության կազմակերպման նախագծի՝ ՇԿՆ-ի կազմն ու բովանդակությունը, զ. ճիշտ է ներկայացնում Աշխատանքների կատարման նախագծի՝ ԱԿՆ-ի կազմն ու բովանդակությունը, է. ճիշտ է ներկայացնում երկրաբանական ու հիդրոերկրաբանական հետազննությունների նպատակը և խնդիրները, ը. ճիշտ է ներկայացնում հիդրոօդերևութաբանական հետազննությունների նպատակը և խնդիրները, թ. ճիշտ է ներկայացնում երկրաբուսաբանական հետազննությունների նպատակը և խնդիրները, ժ. ճիշտ է ներկայացնում բնապահպանական հետազննությունների նպատակը և խնդիրները, ժա. ճիշտ է տարբերակում հետազննությունների նախապատրաստական ,դաշտային և կամերալ փուլերի գործընթացների

	կազմը, ժբ. ճիշտ է ներկայացնում նմուշներ վերցնելու և լաբորատոր հետազննություններ կատարելու գործողությունները:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել շինարարության տեխնոլոգիական մոդելավորման հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շինարարության իրականացման հիմնական եղանակները, բ. ճիշտ է կատարում շինարարական հոսքերի հաշվարկները, գ. ճիշտ է կազմում օրացուցային գրաֆիկները՝ կատարելով համապատասխան մշակումներ, դ. ճիշտ է կազմում ռեսուրսների բաշխման գրաֆիկները՝ կատարելով համապատասխան մշակումներ, ե. ճիշտ է գնահատում օրացուցային և ռեսուրսների բաշխման գրաֆիկներն՝ ըստ տեխնիկատնտեսական ցուցանիշների:
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել շինարարական գլխավոր հատակագծերի նախագծման հիմնական սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. տարբերում է համահրապարակային և օբյեկտային շինարարական գլխավոր հատակագծերի կազմն ու մշակման սկզբունքները, բ. տիրապետում է մոնտաժային մեխանիզմների ընտրության հմտություններին, գ. տիրապետում է ժամանակավոր գույքային շինությունների մակերեսների որոշման հմտություններին, դ. տիրապետում է պահեստների տեսակների ընտրության և մակերեսների հաշվարկման հմտություններին, ե. տիրապետում է ժամանակավոր ջրամատակարարման նախագծման հմտություններին, զ. տիրապետում է ժամանակավոր էլեկտրամատակարարման նախագծման հմտություններին, է. տիրապետում է շինարարական գլխավոր հատակագծերի պայմանական նշաններին և տեխնիկատնտեսական ցուցանիշներին:
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել շինարարական արտադրության նյութատեխնիկական ապահովման և շինարարական մեքենաների և մեխանիզմների շահագործման համակարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շինարարության արտադրական ռեսուրսները, բ. ճիշտ է ներկայացնում շինարարության նյութատեխնիկական ապահովման կազմակերպման սկզբունքները, գ. ճիշտ է ներկայացնում շինարարական մեքենաների համակազմի կառուցվածքը,

	դ. ճիշտ է ներկայացնում մեքենայական համակազմի շահագործման կազմակերպչական ձևերը, ե, ճիշտ է ներկայացնում փոքր մեքենայացման շահագործման կազմակերպման սկզբունքները, զ. ճիշտ է ներկայացնում համալիր մեքենայացման բովանդակությունը:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ ԵՎ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-018
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ շինարարական հրապարակում ճարտարագիտական ցանցերի և բարեկարգման աշխատանքների կատարումն ապահովելու համար:
Մոդուլի տևողությունը	108 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-001 «Ճարտարագիտական գրաֆիկա: Պրոյեկցիաներ և հատույթներ» և ՇԿՇ 5-11-014 «Շենքերի և կառույցների ճարտարապետություն» մոդուլները :
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել տարածքների ճարտարագիտական բարեկարգման հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում տարածքների նախապատրաստման կազմակերպման հիմնական սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում մակերևույթային ջրերի հեռացման եղանակները, տիրապետում է մակերևույթային ջրերի հեռացման նախագծման պարզ հմտություններին, գ. ճիշտ է ներկայացնում փողոցների և ճանապարհների ցանցը, դ. ճիշտ է ներկայացնում տարածքների ուղղաձիգ համահարթման եղանակները, տիրապետում է ուղղաձիգ համահարթման ծավալների որոշման հմտություններին, ե. ճիշտ է ներկայացնում տարածքների կանաչապատման նախագծման հիմունքները, տիրապետում է կանաչապատման ծավալների հաշվարկման հմտություններին:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել շենքերի, տարածքների, բնակավայրերի ինժեներական ցանցերի և սարքավորումների նախագծման հիմունքները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է սահմանում ինժեներական ցանցերի տեսակները,

	բ. ճիշտ է ներկայացնում բնակավայրերի և առանձին շենքերի ջրամատակարարման նախագծման հիմունքները, տիրապետում է ջրամատակարարման նախագծման պարզ հաշվարկներ և գծագրեր կատարելու հմտություններին, գ. ճիշտ է ներկայացնում բնակավայրերի և առանձին շենքերի կոյուղու նախագծման հիմունքները, տիրապետում է կոյուղու նախագծման պարզ հաշվարկներ և գծագրեր կատարելու հմտություններին, դ. ճիշտ է ներկայացնում բնակավայրերի և առանձին շենքերի էլեկտրամատակարարման նախագծման հիմունքները , կարող է մեկնաբանել գծագրերն ու հաշվարկները, ե. ճիշտ է ներկայացնում ջերմատեխնիկայի սկզբունքները, տարբերում է ջերմամատակարարման աղբյուրները և համակարգերը, զ.ճիշտ է ներկայացնում ջերմային ցանցերի նախագծման հիմնական սկզբունքները,կարող է մեկնաբանել գծագրերն ու հաշվարկները, է.ճիշտ է ներկայացնում շենքերի ջեռուցման և օդափոխության եղանակները,նախագծման հիմունքները, կարող է մեկնաբանել գծագրերն ու հաշվարկները, ը. ճիշտ է ներկայացնում բնակավայրերի և առանձին շենքերի գազամատակարարման նախագծման հիմունքները, կարող է մեկնաբանել գծագրերն ու հաշվարկները: թ.ճիշտ է պարզաբանում հատուկ ճարտարագիտական ցանցերի նախագծման սկզբունքները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-019
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել լիարժեք պատկերացումներ շենքերի և կառույցների շահագործման դերի, խնդիրների, նորմատիվային փաստաթղթերի համակարգի, առանձին կոնստրուկտիվ տարրերի տեխնիկական շահագործման գործընթացների տեխնոլոգիական և կազմակերպչական կարողություններ և հմտություններ շահագործման միջոցառումների իրականացումն ապահովելու համար:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-015 «Շինարարական կոնստրուկցիաներ», ՇԿՇ 5-11-016 «Շինարարական արտադրության տեխնոլոգիա» և ՇԿՇ 5-11-027 «Շինարարական

	արտադրության կազմակերպում» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել շենքերի և կառույցների շահագործման միջոցառումների համակարգը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների շահագործման միջոցառումների դասակարգումը, բ. ճիշտ է տարբերակում տեխնիկական սպասարկման, ընթացիկ և կապիտալ վերանորոգումների բովանդակությունն ու խնդիրները, գ. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների մաշվածությանը նպաստող գործոնները, տարբերում է ֆիզիկական ու բարոյական մաշվածությունը, դ. ճիշտ է ներկայացնում շենքերի և դրանց առանձին տարրերի ծառայության ժամկետների որոշման սկզբունքները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել շենքերի և կառույցների տեխնիկական շահագործման կազմակերպման սկզբունքները
Կատարման չափանիշներ	ա. տեղեկացված է շենքերի և կառույցների շահագործման վերաբերյալ նորմատիվային փաստաթղթերի համակարգի մասին, բ. ճիշտ է տարբերակում ընդհանուր, մասնակի և արտահերթ դիտումները, դրանց հերթականությունը և պարբերականությունը, գ. ճիշտ է ներկայացնում շահագործող կազմակերպություններում տեխնիկների դերը և պարտականությունները;
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկայացնել շենքերի և կառույցների կոնստրուկցիաների տեխնիկական շահագործման եղանակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների հիմնատակերի արհեստական ամրացման հմտությունները, բ. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների հիմքերի ամրության վերականգնման հմտությունները, գ. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների պատերի ամրության և պաշտպանիչ հատկությունների վերականգնման հմտությունները, դ. ճիշտ է ներկայացնում ծածկերի ամրության և ջերմաձայնամեկուսիչ հատկությունների վերականգնման հմտությունները, ե. ճիշտ է ներկայացնում պատշգամբների և սանդղաբազուկների ամրության և գեղագիտական տեսքի վերականգնման հմտությունները, զ. ճիշտ է ներկայացնում տանիքի կրող կոնստրուկցիաների , ծածկի, ջրհորդանների, ջրահեռացման խողովակների և

	ձագարների վերանորոգման, փոխարինման, հականեխիչ և հակակոռոզիոն ծածկույթների իրականացման հմտությունները, է. ճիշտ է ներկայացնում միջնորմերի, դռների , պատուհանների հիմնական դեֆեկտները և դրանց վերացման հմտությունները, ը. ճիշտ է ներկայացնում հատակների շահագործական հատկությունների վերականգնման հմտությունները;
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել շենքերի ինժեներական սարքավորումների տեխնիկական շահագործման եղանակները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ներքին խողովակաշարերի ընթացիք նորոգման և մասնակի փոխարինման , ցանցում աղմուկի և խողովակների պատերի նստվածքների վերացման հմտությունները, բ. ճիշտ է ներկայացնում օդափոխության հորանների և կողովների վերանորոգման, դրանց հերմետիկության խախտման հայտնաբերման , օդափոխության մեխանիկական ագրեգատների ճկուն ներդիրների փոխարինման հմտությունները, գ. ճիշտ է ներկայացնում գազատարների ,վերելակների ,էլեկտրասարքավորումների շահագործման խնդիրները և մասնագիտացված կազմակերպությունների կողմից դրանց իրականացման գործընթացը :
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՍԵՅՍՄԱԿԱՅՈՒՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-020
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել սեյսմակայուն շինարարության նշանակությանը, առանձնահատկություններին և ընդհանուր պահանջներին վերաբերող գիտելիքներ, սեյսմակայուն շենքեր ու շինություններ շահագործման հանձնելու մասնագիտական կարողություններ:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլն ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-005 «Ճարտարագիտական երկրաբանություն», ՇԿՇ 5-11-006 «Գեոդեզիական (երկրաբաշխական) աշխատանքներ» և ՇԿՇ 5-11-012 «Աշխատանքի պաշտպանություն» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Սեյսմակայուն շինարարության բովանդակության և նշանակության իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում սեյսմակայուն շինարարության բովանդակությունը, որպես քաղաքացիական շինարարության

	բաղադրամաս, բ. ճիշտ է ներկայացնում սեյսմակայուն շինարարության անհրաժեշտությունը Հայաստանի Հանրապետության տարածքում, գ. ճիշտ է մեկնաբանում սեյսմակայուն շինարարության իրականացման նախապայմանները, դ. ճիշտ է պատկերացնում սեյսմակայուն շինարարության տեխնիկա-տեխնոլոգիական բարդությունները, ե. ճիշտ է պատկերացնում շինհրապարակների և շինտարածքների սեյսմահետազոտության ու դրանցից ստացվող արդյունքների նշանակությունը:
ՈՒսումնառության արդյունք 2	Սեյսմակայուն շինարարության առանցքային խնդիրների իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է թվարկում սեյսմակայուն շինարարության առանցքային խնդիրները, բ. ճիշտ է ներկայացնում շինարարական օբյեկտների հնարավոր վարքը տատանվող հիմքի ներգործության պայմաններում, գ. ճիշտ է ներկայացնում շինարարական օբյեկտների հնարավոր վարքը ցնցվող հիմքի ներգործության պայմաններում, դ. ճիշտ է նկարագրում շինարարական օբյեկտներին սպառնացող հետևանքները երկրակեղևի վերին շերտախմբի հնարավոր տատանումների և ցնցումների պայմաններում, ե. ճիշտ է նկարագրում երկայնակի սեյսմիկ ալիքների առաջացման սխեման և դրանց ներգործությունը շինարարական օբյեկտների վրա, զ. ճիշտ է նկարագրում լայնակի սեյսմիկ ալիքների առաջացման սխեման և դրանց ներգործությունը շինարարական օբյեկտների վրա, է. ճիշտ է ներկայացնում երկրաշարժերի ժամանակ առաջացող իներցիայի ուժերի և շինարարական օբյեկտների հիմնական բեռնվածքների համադրումը, ը. ճիշտ է նկարագրում սեյսմիկալիքների ակտիվության գնահատման սանդղակը:
ՈՒսումնառության արդյունք 3	Սեյսմիկ շրջանացման սկզբունքների և համապատասխան քարտեզներից օգտվելու իմացություն
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է պատկերացնում սեյսմիկ շրջանացման հիմնական սկզբունքները, բ. ճիշտ է ներկայացնում սեյսմիկ շրջանացման խնդիրները և նշանակությունը, գ. ճիշտ է ներկայացնում սեյսմիկ շրջանացումը, որպես շինարարական նորմաների ու կանոնների բաղկացուցիչ մաս, դ. ճիշտ է ներկայացնում շինարարության ոլորտում օգտագործվող սեյսմաշրջանացման և միկրոսեյսմաշրջանացման

	քարտեզների դերն ու նշանակությունը, ե. ճիշտ է ընթերցում և վերլուծում «իզոսեյստ»-ների ընթացքը ՀՀ սեյսմատեկտոնական քարտեզում:
ՈՒսումնառության արդյունք 4	Շենքերի և կառույցների սեյսմակայունության ապահովման միջոցառումների իմացություն:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է թվարկում շենքերի և կառույցների սեյսմակայունության ապահովման առաջնահերթ միջոցառումները, բ. ճիշտ է ներկայացնում շինհրապարակի և շինտեղամասի տեղակայման վայրի ընտրության հարցը՝ հաշվի առնելով վերջինիս երկրաբանական հիմքի առանձնահատկությունները, գ. ճիշտ է ընտրում և մեկնաբանում սեյսմակայուն կոնստրուկտիվ սխեմաները, դ. ճիշտ է կատարում սեյսմակայուն շինարարությանն անհրաժեշտ համապատասխան հաշվարկները, ե. ճիշտ է թվարկում սեյսմակայուն շինարարական կոնստրուկցիաները և շինվածքները, զ. ճիշտ է նկարագրում սեյսմակայուն շինանյութերը, է. ճիշտ է նկարագրում սեյսմակայուն շինարարությանը ներկայացվող աշխատանքային որոկները, ը. ճիշտ է գնահատում շինարարական աշխատանքներ ծավալելու նպատակով ընտրված տեղանքի կամ տեղամասի միջին գրունտային պայմանները:
ՈՒսումնառության արդյունք 5	Սեյսմակայուն տարաբնույթ աշխատանքների իմացություն:
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է գնահատում շենքերի և կառույցների հիմնական բեռնվածքների սեյսմակայունությունն ու սեյսմիկ անվտանգությունը, բ. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների հակասեյսմիկ պաշտպանության միջոցառումները, գ. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների սեյսմիկ վտանգավորության բնութագրերը՝ կատարելով համապատասխան վերլուծություն, դ. ճիշտ է ներկայացնում շենքերի և կառույցների սեյսմակայունության ստուգման փորձնական (փորձարարական) միջոցառումները, ե. ճիշտ է ներկայացնում սեյսմակայուն շինարարության մեջ կիրառվող ժամանակակից բարձր ու առաջատար տեխնոլոգիաները, մասնավորապես՝ իներցիոն, զսպանակավոր և հյուսվածքավոր հարվածամարիչները (դեմպֆերները), ինչպես նաև՝ կապարա-ռետինե ու շփաճոճանակային հենարանները:

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԱԽՏՈՐՈՇՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-021
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ շենքերի և առանձին կոնտրուկցիաների տեխնիկական վիճակի որոշման բնագավառում:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-014 «Շենքերի և կառույցների ճարտարապետություն» , ՇԿՇ 5-11-015 «Շինարարական կոնստրուկցիաներ», ՇԿՇ 5-11-016 «Շինարարական արտադրության տեխնոլոգիա » և ՇԿՇ 5-11-019 «Շենքերի և կառույցների շահագործում» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել շինարարական կոնստրուկցիաների շահագործական բնութագրերին առաջադրվող պահանջները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է տարբերակում կոնստրուկցիաների առաջին և երկրորդ խմբի սահմանային վիճակները, բ. ճիշտ է ներկայացնում կոնստրուկցիաների և դրանց առանձին տարրերի պլաստիկ քայքայումը, գ. ճիշտ է ներկայացնում կոնստրուկցիաների և դրանց առանձին տարրերի փխրուն քայքայումը, դ. ճիշտ է ներկայացնում կոնստրուկցիաների քայքայումը հոգնածությունից, ե. ճիշտ է ներկայացնում ճաքերն ու տեղաշարժերը, զ. ճիշտ է ներկայացնում կոնստրուկցիաների տեխնիկական վիճակի հիմնական հայտանիշները՝ ճկվածքները, դեֆորմացիաները, սահմանային ամրության ցուցանիշները, կենսավնասվածքները, կոռոզիան:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել շենքերի և կառույցների տեխնիկական վիճակի ախտորոշման կարգը և աշխատանքների կազմակերպումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում նախապատրաստական հետազննությունների միջոցառումները, բ.. ճիշտ է ներկայացնում գործիքային հետազննությունների միջոցառումները, գ.ճիշտ է ներկայացնում լաբորատոր հետազննությունների միջոցառումները, դ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի լրացման և հաշվետվությունների պատրաստման կարգը:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկացնել երկրաչափական պարամետրերի, ճկվածքների և դեֆորմացիաների որոշման եղանակները

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում և կարող է իրականացնել շենքերի և կառույցների երկրաչափական պարամետրերի չափումներ՝ կոնստրուկտիվ չափերի, թռիչքների լայնության, սյուների բարձրության, կոնստրուկցիաների հատույթի չափսերի ,հեծանների հենման հանգույցների պարամետրերի որոշում, բ. ճիշտ է կիրառում ճկվածքների չափման մեթոդները և կարող է պարզ եղանակներով որոշել դրանք գործնականում, գ. ճիշտ է օգտագործում ուղղաձիգից կոնստրուկցիաների շեղման որոշման մեթոդները և կարող է պարզ եղանակներով որոշել դրանք գործնականում, դ. ճիշտ է բացատրում դեֆորմացիաների առաջացման հիմնական պատճառները, ե. ճիշտ է ներկայացնում ճաքերի չափման և հսկման եղանակները, կարող է դասակարգել ճաքերը, տիրապետում է ճաքերի չափման գործիքներից օգտվելու հմտություններին, զ. ճիշտ է նկարագրում կոնստրուկցիաների տիպիկ ճաքերը, է. ճիշտ է ներկայացնում փարոսների տեղադրման գործողությունները:
ՈՒսումնառության արդյունք 4	Նրկայացնել տարբեր նյութերից շինարարական կոնստրուկցիաների հետազննական միջոցառումները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաների հետազննական միջոցառումները, բ. ճիշտ է ներկայացնում մետաղական կոնստրուկցիաների հետազննական միջոցառումները, գ. ճիշտ է ներկայացնում փայտե կոնստրուկցիաների հետազննական միջոցառումները, դ. ճիշտ է ներկայացնում քարե կոնստրուկցիաների հետազննական միջոցառումները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ ՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-022
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ շենքերի և առանձին կոնտրուկցիաների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման իրականացումն ապահովելու համար:
Մոդուլի տևողությունը	72 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-015 «Շինարարական կոնստրուկցիաներ», ՇԿՇ 5-11-014 «Շենքերի և կառույցների ճարտարապետություն» ,ՇԿՇ 5-11-016 «Շինարարական արտադրության տեխնոլոգիա», ՇԿՇ 5-11-019 «Շենքերի և կառույցների շահագործում» և ՇԿՇ 5-11-021 «Շենքերի և

	կառույցների տեխնիկական վիճակի ախտորոշում» մոդուլները:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել արդյունաբերական շենքերի վերակառուցման առանձնահատկությունները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է տարբերակում վերակառուցում, տեխնիկական վերազինում, ընդլայնում հասկացությունները բ. ճիշտ է ներկայացնում գործող արտադրության պայմաններում վերակառուցման աշխատանքների առանձնահատկությունները, գ. ճիշտ է էներկայացնում արդյունաբերական շենքերի վերակառուցման տնտեսական արդյունավետության որոշման եղանակները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել համաշինարարական աշխատանքները վերակառուցման և վերականգնման ժամանակ
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հիմնատակերի ուժեղացման գործընթացները, բ.. ճիշտ է ներկայացնում ջրամեկուսացման և խոնավային ռեժիմի վերականգնման գործընթացները, գ. ճիշտ է ներկայացնում շենքերի արտաքին տեսքի վերականգնման կամ բարելավման գործընթացները, դ. ճիշտ է ներկայացնում տանիքի, միջնորմերի և այլ տարրերի փոխարինման կամ ուժեղացման գործընթացները, ե. ճիշտ է ներկայացնում կոնստրուկցիաների դեֆեկտների վերացմնան գործընթացները, զ.տիրապետում է երկաթբետոնե կոնստրուկցիաների բետոնի քայքայված տեղամասերի վերականգնման հմտություններին տորկրետացման միջոցով, է. տիրապետում էերկաթբետոնե կոնստրուկցիաների կցվանքային կարերի հերմետիկացման հմտություններին:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկացնել կրող կոնստրուկցիաների փոխարինման գոևծընթացները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում թեթևացված ծածկի սալերի կիրառումը ծածկերի փոխարինման ժամանակ, բ. ճիշտ է ներկայացնում չհանվող կաղապարամածի կիրառումը միաձույլ երկաթբետոնե կոնստրուկցիաների փոխարինման ժամանակ, գ.ճիշտ է ներկայացնում պատշգամբների,սանդղաբնազուկների և հարթակների փոխարինման հիմնական եղանակները,
ՈՒսումնառության արդյունք 4	Ներկայացնել կրող կոնստրուկցիաների ուժեղացման գործընթացները

Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հիմքերի ուժեղացման գործընթացները, բ. ճիշտ է ներկայացնում քարե կոնստրուկցիաների ուժեղացման և բարելավման եղանակները, գ. ճիշտ է ներկայացնում հեծանների և մարդակների ուժեղացման եղանակները, դ. ճիշտ է ներկայացնում սյուների ուժեղացման եղանակները, ե. ճիշտ է ներկայացնում միջհարկային ծածկերի և վերջնածածկի ուժեղացման եղանակները, զ. ճիշտ է ներկայացնում հանգույցների ուժեղացման եղանակները, է. ճիշտ է ներկայացնում մետաղական և փայտե կոնստրուկցիաների ուժեղացման եղանակները:
ՈՒսումնառության արդյունք 5	Ներկայացնել վերակառուցման ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումները
Կատարման չափանիշներ	ա.ճիշտ է ներկայացնում վերահատակագծման և կոնստրուկտիվ լուծումների փոխարինման գործընթացները բնակելի շենքերում, բ.ճիշտ է ներկայացնում միահարկ արդյունաբերական շենքերի վերակատուցման սխեմաների օրինակները:
ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱԿԱԿՈՌՈԶԻՈՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ»	
Մոդուլի դասիչը	ՇԿՇ 5-11-023
Մոդուլի նպատակը	Ուսանողի մոտ ձևավորել կարողություններ և հմտություններ շինարարության և շահագործման ժամանակ հակակոռոզիոն պաշտպանիչ համակարգերի իրականացումն ապահովելու համար:
Մոդուլի տևողությունը	54 ժամ
Մուտքային պահանջները	Այս մոդուլը ուսումնասիրելու համար ուսանողը պետք է նախապես ուսումնասիրած լինի ՇԿՇ 5-11-016 «Շինարարական արտադրության տեխնոլոգիա» մոդուլը:
Մոդուլի գնահատման կարգը	Մոդուլի ընդունելի կատարողականը գնահատվում է յուրաքանչյուր արդյունքի կատարման չափանիշների մակարդակի ապահովմամբ:
ՈՒսումնառության արդյունք 1	Ներկայացնել հակակոռոզիոն պաշտպանիչ համակարգերի դասակարգումը և կիրառումը
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում հակակոռոզիոն պաշտպանիչ համակարգերի նպատակները և դասակարգումը, բ. ճիշտ է ներկայացնում լաքաներկային պաշտպանիչ համակարգերը, դրանց իրականացման տեխնոլոգիական հաջորդականությունը և կիրառման ոլորտը,

	դ. ճիշտ է ներկայացնում հեղուկ ռետինե խառնուրդների հիման վրա պաշտպանիչ համակարգերը, դրանց իրականացման տեխնոլոգիական հաջորդականությունը և կիրառման ոլորտը, գ. ճիշտ է ներկայացնում սոսնձվող պաշտպանիչ համակարգերը, դրանց իրականացման տեխնոլոգիական հաջորդականությունը և կիրառման ոլորտը, ե. ճիշտ է ներկայացնում վուլկանացվող պաշտպանիչ համակարգերը, դրանց իրականացման տեխնոլոգիական հաջորդականությունը և կիրառման ոլորտը, զ. ճիշտ է ներկայացնում երեսպատվող պաշտպանիչ համակարգերը, դրանց իրականացման տեխնոլոգիական հաջորդականությունը և կիրառման ոլորտը, է. ճիշտ է ներկայացնում մետաղայնացված և կոմբինացված պաշտպանիչ համակարգերը, դրանց իրականացման տեխնոլոգիական հաջորդականությունը և կիրառման ոլորտը, ը. ճիշտ է ներկայացնում մածիկային, ծեփամածկային և լցնովի պաշտպանիչ համակարգերը, դրանց իրականացման տեխնոլոգիական հաջորդականությունը և կիրառման ոլորտը, թ. ճիշտ է թվարկում ՀՀ շուկայում առավել տարածված պաշտպանիչ համակարգերը, ժ. ճիշտ է ներկայացնում պարզ ծածկույթների անցկացման գործողությունները:
ՈՒսումնառության արդյունք 2	Ներկայացնել հակակոռոզիոն պաշտպանիչ համակարգերի իրականացմանը նախորդող մակերևույթների նախապատրաստման գործընթացները
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում մետաղական մակերևույթների նախապատրաստման գործընթացները, օքսիդներից մաքրման աստիճանը, բ. ճիշտ է ներկայացնում բետոնե մակերևույթների նախապատրաստման գործընթացները և կիրառվող ծածկույթից կախված՝ բետոնային մակերևույթին ներկայացվող պահանջները՝ խխունջների և խոռոչների գումարային մակերեսը,մակերևույթային ծակոտկենությունը, խոնավությունը:
ՈՒսումնառության արդյունք 3	Ներկացնել հակակոռոզիոն պաշտպանիչ համակարգերի իրականացման առանձնահատկությունները ձմեռային պայմաններում
Կատարման չափանիշներ	ա. ճիշտ է ներկայացնում ձմեռային պայմաններում լաքաներկային և մածիկային հակակոռոզիոն ծածկույթների

	իրականացման կարգը,անվտանգության տեխնիկային կանոնները նյութերի տաքացման ժամանակ, բ. ճիշտ է ներկայացնում ջերմաստիճանային սահմանները ռետինացված ծածկույթների իրականացման համար, գ. ճիշտ է ներկայացնում մետաղայնացված ծածկույթները արագ սառեցումից պաշտպանելու միջոցառումները:

Աղյուսակ 3

Միջին մասնագիտական կրթության 2902 «Շենքերի և կառույցների շինարարություն և շահագործում» մասնագիտության տեխնիկ մասնագիտացման օրինակելի ուսումնական պլան

N	Առարկայախմբեր, առարկաներ և մոդուլներ	Շաբաթների թիվը	Ուսանողի առավելագույն բեռնվածությունը, ժամ	Պարտադիր լսարանային պարապմունքներ, ժամ	ՈՒսուց-ման երաշխա-վորվող տարին
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ, ՍՈՑԻԱԼ - ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		108	72	1
2.	Տնտեսագիտության հիմունքներ		81	54	1
3.	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		81	54	1
4.	Իրավունքի հիմունքներ		54	36	1,2
5.	Պատմություն		81	54	1
6.	Ռուսաց լեզու		108	72	1
7.	Օտար լեզու		108	72	1,2
8.	Ֆիզիկական կուլտուրա		158	158	1,2,3
	ԸՆԴԱՄԵՆԸ		**779**	**572**	
	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Էկոլոգիայի հիմունքներ		54	36	2
2.	Քաղաքացիական պաշտպանություն եվ արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		27	18	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**81**	**54**	
	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ				
1.	Հաղորդակցություն		54	36	1
2.	Անվտանգություն և առաջին օգնություն		54	36	1
3.	Աշխատանքային գործունեության ընդհանուր հիմունքներ		81	54	1
4.	Համակարգչային օպերատորություն		108	72	1
	ԸՆԴԱՄԵՆԸ		**297**	**198**	
	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Ճարտարագիտական գրաֆիկա: Պրոյեկցիաներ և հատույթներ		108	72	1
2.	Տեխնիկական մեխանիկայի ուսումնասիրման առարկան, մեթոդները և խնդիրները		108	72	1
3.	Էլեկտրատեխնիկայի և էլեկտրոնիկայի գործնական բովանդակությունը		135	90	1,2
4.	Շինարարական նյութեր և իրեր		162	108	1,2

5.	Ճարտարագիտական երկրաբանություն		108	72	2
6.	Գեոդեզիական (երկրաբաշխական) աշխատանքներ		108	72	1
7.	Շինարարական մեքենաներ և փոքր մեքենայացման միջոցներ		108	72	2
8.	Շինարարության տնտեսագիտություն		108	72	2
9.	Մենեջմենթ և շինարարություն		81	54	2
10.	Տեղակատվական տեխնոլոգիաներ մասնագիտական գործունեությունում և Նախագծման ավտոմատացում		81	54	3
11.	Մասնագիտական գործունեության իրավական հիմքերը		81	54	2
12.	Աշխատանքի պաշտպանություն		108	72	2
13.	Չափագիտություն, ստանդարտացում, սերտիֆիկացում		108	72	2
	ԸՆԴԱՄԵՆԸ		**1404**	**936**	
	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ				
1.	Շենքերի և կառույցների ճարտարապետություն		162	108	2
2.	Շինարարական կոնստրուկցիաներ		162	108	2,3
3.	Շինարարական արտադրության տեխնոլոգիա		162	108	2,3
4.	Շինարարական արտադրության կազմակերպում		108	72	3
5.	Ճարտարագիտական ցանցեր և տարածքների բարեկարգում		162	108	3
6.	Շենքերի և կառույցների շահագործում		108	72	3
7.	Սեյսմակայուն շինարարություն		108	72	3
8.	Շենքերի և կառույցների տեխնիկական վիճակի ախտորոշում		108	72	3
9.	Շենքերի և կառույցների վերակառուցում և վերականգնում		108	72	3
10.	Հակակոռոզիոն պաշտպանիչ համակարգեր շինարարությունում		81	54	3
	ԸՆԴԱՄԵՆԸ		**1269**	**846**	
	ԸՆՏՐՈՎԻ		**162**	**108**	
	ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ԺԱՄԵՐ		**112**	**112**	
	ԸՆԴԱՄԵՆԸ	**79**	**4104**	**2844**	
	ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ		**300**		
	ՊՐԱԿՏԻԿԱ	**36**			
	ՄԻՋԱՆԿՅԱԼ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	**6**			
	ՊԵՏԱԿԱՆ ԱՄՓՈՓԻՉ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ	**2**			
	ԸՆԴԱՄԵՆԸ	**123**			